Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Տավրուսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի Հայոց լեզու և գրականություն (9 դասաժամ), Մաթեմատիկա (17 դասաժամ), Հանրահաշիվ, երկրաչափություն (10 դասաժամ), Բնագիտություն (4 դասաժամ), Աշխարհագրություն (4 դասաժամ), Ֆիզիկա (4 դասաժամ), Քիմիա (4 դասաժամ), Կենսաբանություն (4 դասաժամ), Ինֆորմատիկա (1 դասաժամ), Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն (4 դասաժամ), Երաժշտություն (5 դասաժամ), Կերպարվեստ (6 դասաժամ), Տեխնոլոգիա (5 դասաժամ), Ֆիզկուլտուրա (15 դասաժամ), ՆԶՊ (0,5 դրույք) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցին հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել

-դիմում (Ձև 1),
-մեկ լուսանկար 3Х4 չափի,
-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
-անձը հաստատող փաստաթուղթ,
-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդված 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),
-ինքնակենսագրություն (Ձև 5)
-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ապրիլի 3-ից մինչև ապրիլի 16-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-16:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա ապրիլի 18-ին՝ ժամը 14:30-ին, ՀՀ Սյունիքի մարզի «Տավրուսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցեն՝ գ. Տավրուս 2-րդ փողոց տուն 22:
Տեղեկությունների համար զանգահարել՝***, 093-95-96-26*** հեռախոսահամարով